ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Առարկա՝ Երաժշտություն

Ուսուցչուհի՝ Աննա Գրիգորյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.Կոմիտասի կենսագրությունը 5

2.Ստեղծագործական ուղին 7

3.Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքների արդիականության հարցի շուրջ 10

4.Կոմիտասի մանկավարժական հայացքների արտացոլումը «Պարը և մուկը»հոդվածում 15

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆ 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կոմիտասը Հայաստան աշխարհի մշակութային խորհրդանիշն է, հայ երգարվեստի, ժողովրդական և հոգևոր երաժշտության փրկիչը, համակարգողն ու տեսաբանը: Կոմիտասի գործունեության, վաստակի արժեքի, կյանքի ու գործի նշանակության և կարևորության մասին են վկայում մինչ այսօր կատարված տարբեր ուսումնասիրությունները, որոնցում բազմիցս փաստվում է Կոմիտասի հասարակական-լուսավորչական, գիտա- պատմական և տեսական մեծ արժեք ներկայացնող ժառանգությունը՝ ըստ արժանվույն գնահատելով նրա դերն ու նշանակությունը հայ երաժշտության պատմության մեջ: Հանճարեղ Կոմիտասի կյանքը և գործունեության տարբեր ոլորտները՝ կոմպոզիտորական, երաժշտագիտական, կատարողական, հասարակական-լուսավորչական, գիտա-պատմական և տեսական մեծ արժեք ունեն: Հենց այդ պատճառով դրանք դարձել են տարբեր տեսակի ուսումնասիրությունների առարկա: Այս առումով՝ բացառություն չեն նաև Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքները, որոնց վերաբերյալ տարբեր առիթներով կատարվել են նշանակալի ուսումնասիրություններ:

Կոմիտասի երաժշտական դիմագիծը ուսումնասիրողները կապում են գլխավորապես նրա հիմնական գործունեության՝ ժողովրդական երգերի հավաքման և մշակման հետ: Նրա գործը ժողովրդական երգերի մշակման դասական օրինակ դարձավ և որպես կարևոր արժեք մնաց պատմության մեջ՝ մինչ այսօր պահպանելով իր արդիականությունը և գրավելով շատ հետազոտողների:

Կապված լինելով հայկականի, հոգևորի հետ՝ Կոմիտաս վարդապետը ժողովրդական երգերի իր մշակումներով, դրանց կազմավորման գործընթացի համար մեծ դերով նպաստեց ինչպես ժողովրդական երգին նոր արդիական կյանք հաղորդելուն, այնպես էլ հայկական երաժշտական ազգային դպրոցին նոր երաժշտական գեղագիտական մարմնացում տալուն:

Հայտնի է, որ Կոմիտասը ազգային երաժշտանոց հիմնելու ծրագրեր էրփայփայում, նա մշտապես մտահոգված էր «երաժշտական ուժերի» կերտման և դաստիարակման հարցերով: Հանճարեղ դասական երաժշտի տասնյակ տարիներ փայփայած նվիրական երազանքն էր՝ ստեղծել, հիմնել հայկական երաժշտանոց, որը,ցավոք, նրան այդպես էլ

չհաջողվեց: Նրա այս գաղափարն իրականացավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո միայն, երբ Երևանում հիմնադրվեց պետական կոնսերվատորիա, որն այժմ հպարտությամբ կրում է մեծ Կոմիտասի անունը: Կոմիտաս հունարեն թարգմանությամբ նշանակում է «մտահոգ, հոգատար». այդպիսին էր ուզում տեսնել նա նաև հայ ուսուցչին ինքը՝ Կոմիտասը, ով լավագույն, մարդասեր ուսուցչի իր տեսլականի կերտման ճանապարհին ձևավորեց ու մեզ ժառանգեց իր մանկավարժական հայացքներն ու սկզբունքները, գաղափարական-գեղարվեստական հայացքները, որոնք այսօր էլ ունեն արդիական ու կարևոր նշանակություն՝ կրթության տարբեր աստիճաններում ուսումնա-դաստիարակչական, մանկավարժական խնդիրների լուծման առումով: Վարդապետը տարբեր առիթներով անդրադարձել է ու բարձրաձայնել երաժշտության ուսուցման մեջ առկա իր ժամանակի խնդիրներին, այդ գործում առկա բացերին ու թերություններին և փորձել նախանշել երաժշտության ուսուցման գործընթացի արդյունավետ ճանապարհներ:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել Կոմիտաս վարդապետի մանակավարժական հայացքների արդիա-կանությունը:

Հետազոտության խնդիրները: Հետազտության նպատակից բխել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ համապատասխան գրականու-թյուն:
2. Վերլուծել Կոմիտասի մանկավարժական հայացքները:
3. Պարզել Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքների նշանակությունը իր ժամանակի և արդի երաժշտական կրթության զարգացման մեջ:
4. Հիմնավորել Կոմիտասի մանկավարժական հայացքների արդիականությունը՝ երաժշտության ուսուցման միջոցով կրթական ու դաստիարակչական խնդիրների լուծման տեսանկյունից:

ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) ծնվել է 1869թ. սեպտեմբերի 26-ին Թուրքիայի Քյոթահիա կամ Կուտինա քաղաքում: Իր կենսագրության մեջ նա վկայում է, որ Սողոմոնյանները, ինչպես և Քյոթահիայի հայ ընտանիքներից շատերը պատկանել են հայկական Զոկ ցեղին, իրենց պատմական հայրենիքից՝ Գողթն գավառի (Ագուլիս) Ցոնա գյուղից գաղթել են 17-րդ դարի վերջերում և բնակություն հաստատել Քյոթահիայում: Նրանք աչքի են ընկելմ գեղարվեստասիրությամբ, հատկապես գեղարվեստական բրութագործությամբ և երաժշտականությամբ: Կոմիտասի հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, արեստով կոշկակար, ուներ գեղեցիկ ձայն և որպես երգիչ դպրություն էր անում իրենց քաղաքի հայկական եկեղեցում: Իսկ մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը, Բրուսա քաղաքից էր, երաշժտական արտակարգ ընդունակությունների տեր մի կին, որի հորինած երգերը տարածված էին համաքաղաքացիների մեջ և սիրով երգվում էին: Մանուկ հասակում զրկվելով ծնողներից, Սողոմոնը ճաշակում է որբության բոլոր դառնությունները: Վաղտարիքում՝ 1881 թ., 12-ամյա Սողոմոնը Քյոթահիայի հոգևոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանի հետ մեկնում է Սուրբ Էջմիածին և սկսում ուսանել Գևորգյան ճեմարանում: 1895 թ. ձեռնադրվում է վարդապետ, որից հետո մեկնումէ Թիֆլիս և վեց ամիս հարմոնիա է ուսանում Մակար Եկմալյանի մոտ: Սովորել է Բեռլինում՝ պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում, որից հետո փորձել է կիրառել այդ փորձը ազգային ավանդույթ կառուցելո ւհամար: Երաժշտության պարապմունքներին զուգահեռ Կոմիտասը հաճախում է նաև Բեռլինի Կայսերական համալսարանի փիլիսոփայության, գեղագիտության, ընդհանուր և երաժշտության պատմության դասախոսություններին: 1899 թ. սեպտեմբերին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին:

Նա հավաքել և գրառել է ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտության նմուշներ, որոնցից ավելի քան կեսը հետագայում կորել է և միայն մոտ 1200-ն է պահպանվել: Բացի հայ ժողովրդական երգերից, նա նաև հետաքրքրվել է այլ մշակույթներով և 1904 թ. հրատարակել քրդական ժողովրդական երգերի երբևէ գոյություն ունեցող առաջին ժողովածուն: Նրա երգչախումբը շատ եվրոպական երկրներում ներկայացրել է հայկական երաժշտությունը՝ արժանանալով այդ թվում Կլոդ Դեբյուսիի

գովասանքին: 1910 թ. Կոմիտասը հաստատվում է Կ.Պոլսում՝ խուսափելով Էջմիածնի ծայրահեղ պահպանողական հոգևորականների վատ վերաբերմունքից և հայկական երաժշտությունը ներկայացնում ավելի լայն լսարանի: Կոմիտասին ջերմորեն ընդունել են հայկական համայնքներում, իսկ Արշակ Չոպանյանը նրան անվանել է «հայկական երաժշտության փրկիչ»:

Հայոց ցեղասպանության ժամանակ՝ շատ այլ հայ մտավորականների հետ մեկ տեղ օսմանյան կառավարության կողմից Կոմիտասը ձերբակալվում է և արտաքսվում Չանղրը: Թե բանտում և թե աքսորի ճանապարհին պոլսահայ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները, որոնց թվում և Կոմիտասը ենթարկվում են ոստիկանական անլուր կամայականությունների և ծաղր ու ծանակի: Նրան շուտով ազատում են անհայտ հանգամանքներում, որից հետոստանումէ հոգեկանխանգարում և նրա մոտ ձևավորվում է հետվնասվածքային սթրես: Կ.Պոլսի ատելության մթնոլորտը և հայերի զանգվածային կոտորածների մասին լուրերը շարունակում են խաթարել նրա զգայուն հոգեկանվիճակը: Մինչև 1919 թ. նրան սկզբում տեղավորում են թուրքական ռազմական հոսպիտալում և ապա՝ տեղափոխում Փարիզի հոգեբուժարաններ, որտեղ էլ տառապանքների մեջ անց է կացնում իր կյանքի վերջին տարիները: Բժիշկների ձեռնարկած բոլոր միջոցներն անցնում են ապարդյուն: Չի հաջողվում վերականգնել մեծ գեղարվեստագետի առողջությունը և Կոմիտասը մոտ 20 տարվա տառապանքներից հետո՝ 1935թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում է: Այսպես ողբերգական է ավարտվում Կոմիտասի կյանքը: 1936թ. Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ Կոմիտասի աճյունը Փարիզից տեղափոխվում է Երևան և հայրենի երկրում հանձնվում հողին:

Կոմիտասին ընկալում են որպես ցեղասպանության զոհ և արվեստում պատկերում՝ որպես ցեղասպանության հիմնական խորհրդանիշներից մեկը:

2015 թ. հունվարի 29-ին Երևանում Կոմիտասի անվան զբոսայգում տեղի ունեցավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացումը, որի կառուցման որոշումը կայացվել էր 2013 թ. մայիսի 30-ին Հայաստան համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդինիստում՝ ՀՀ նախագահի առաջարկի հիման վրա: Կոմիտասը համարվում է ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնադիրը: Հայտնի է որպես երաժշտական էթնոգրաֆիայի ռահվիրաներից մեկը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Կոմիտասի գործնեության ամենաբեղմնավորշրջանները հանդիսացավ 1900-1910թթ.՝ Էջմիածին և 1910-1916թթ.՝ Կ. Պոլիս, շրջանները: այդ տարիներին էր որ նա մշակեց իր ոճը և կերտեց իր գողտրիկ մեներգերը, խմբերգերը և դաշնամութային պարերը: Կոմիտասի երգերի ճնշող մեծամասնությունը կազմում է հայկական շողովրդական երգի գեղարվեստական վերամշակումը: Որպես ստեղծագործող՝ Կոմիտասը չափազանց խստապահանջ է եղել իր նկատմամբ: Կոմիտասի խստապահանջությունը սկսվում է ժողովրդական երգի հենց ձայնագրման պահից: Իր կատարած ձայնագրությունների վերաբերյալ նա ասում է. «*Մենք գրի ենք առել եղանակները հայ գեղջուկի բերանից անձամբ այնպես, ինչպես երգում են գյուղերում»:*

Կոմիտասի վոկալ ստեղծագործությունը գերազանցապես բաղկացած է մեներգերից և խմբերգերից, որոնք ցայտուն կերպով արտացոլում են հայկական ժողովրդական երգի բազմազանությունը: Այստեղ մենք գտնում ենք սիրային-լիրիկական, աշխատանքային, էպիկական, պանդխտի, հարսանեկան-ծիսական, մանկական և այլ տիպի երգեր:

Էպիկական երգի հիանալի նմուշ է «Մոկաց Միրզան»: Նրա մեջ էպիկական շնչով է պատկերված Մոկաց Միրզայի հերոսական կերպարը: Այդ ժանրից քիչ բան է հասել մեզ: Այդ պատճառով էլ Մոկաց Միրզայի արժեքն ավելի է բարձրացնում:

Հայ աշխատավոր ժողովրդի սոցիալական դրության բացահայտման տեսակետից բացառիկ կարևոր ստեղծագործություններն են «Անտունին» և «Կռունկը»: Նրանց մեջ պատկերված է հայրենի հողից տնից ու տեղից զրկված դարիբների թափառական կյանքը, որը լի է զրկանքներով ու տանջանքով:

Հայկական երաժշտական ստեղծագործության մեջ կարևոր ավանդ են ոչ միայն Կոմիտասի վոկալ ստեղծագործությունները, այլև նրա դաշնամուրային պարերը, որոնցից յուրաքանչյուրն իր կերպարի խորությամբ, հղկվածությամբ ու վերջավորվածությամբ մի մի անգին գոհար է: Նրա մեջ պահպանվում է երաժշտական գործիքների կոլորիտը, ժողովրդական պարի ռիթմիկ բազմազանությունը, մելոդիկ գրավչությունը և քնքուշ նազանքը:

Զգալի քանակությամբ ստեղծագործություններ են մնացել նրա սևագիր ձեռա-

գրերում և այժմ ուսումնասիրվում ու նախապատրաստվում են տպագրության: Նա մշտական մղում է ունեցել դեպի օպերային ստեղծագործությունը: Հանրահայտ է նրա աշխատանքը Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի վրա, որը երկար ժամանակ զբաղեցրել է նրան: Մեծ է նրա ավանդը նաև հայ հոգևոր երգերի և հատկապես պատարագի երգեցողության բազմաձայն մշակման ուղղությամբ: Դժբաղտաբար այս ուղղությամբ էլ Կոմիտասն ավարտի չի հասցրել իր սկսածը. նրա Պատարագը մնացել է սևագիր վիճակում և ձեռագիրն այնքան է խճողված բազմաթիվ ուղղումներով ու հավելումներով, որ դարձել է գրեթե անընթեռնելի:

Կոմիտասը փայլել է ոչ միայն վոկալ, այլև գործիքային երաժշտության կատարմամբ: Նա կատարելապես տիրապետում էր հայ ժողովրդական սրինգին, փորձում էր կատարելագործել այն և մտադրվել էր տարբեր տեսակի սրինգների նվագախումբ ստեղծել: Կոմիտասը տիրապետում էր նաև դաշնամուրին և երգեհոնին: Լավ գիտեր դրանց արտահայտչական հնարավորությունները և դաշնամուրը վարպետորեն օգտագործում էր իր ստեղծագործության մեջ: Ոչ միայն դաշնամուրային պիեսներում, այլև մեներգերի խմբերգերի ընկերակցության մեջ:

Կոմիտասի կատարողական արվեստի բաղկացուցիչ մասերից մեկն էլ նրա խմբավարական-դիրիժորական արվեստն է: Սկսած Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աշակերտական երգչախմբից, որը հատկապես 20-րդ դարի առաջին տարիներին, շնորհիվ նրա տքնաջան աշխատանքի, միանգամից փայլեց և դարձավ հայ գեղարվեստական կյանքի նշանակալից երևույթը, վերջացրած Կ. Պոլսի հռչակված «Գուսան» երգչախմբով, ինչպես և տարբեր քաղաքներում կազմակերպված սիրողական երգչախմբերով, Կոմիտասը մեծ թափ հաղորդեց բազմաձայնության տարածման գործին: Համբերատար ու հետևողական աշխատանքով՝ նա երաժշտական մասնագիտական կրթություն չունեցող մարդկանցից կարողացել էր ստեղծել միաձույլ դիսցիպլինար, գեղարվեստական բարձր հատկանիշներ ունեցող կոլեկտիվ, որն ի վիջակի էր կատարելու Կոմիտասյան խմբերգային պարտիտուրաները, գրված չորս, վեց և նույնիսկ ութ ձայնի համար: Իսկ դա խոշոր նվաճում էր հայկական երաժշտության կյանքում:

Կոմիտասի խմբավարական արվեստն անբաժան է եղել մանկավարժական ու կատարողական գործնեությունից: Իր երգչախմբերը կազմակերպելիս նա հանդես է եկել որպես հոգատար մանկավարժ, խմբի երգիչ-երգչուհիներին սովորեցրել է ոչ միայն

կատարելիք երգերը, այլև տվել է ընդհանուր գիտելիքներ երաժշտության, մասնավորապես հայ երաժշտության վերաբերյալ: Մանկավարժ Կոմիտասը վարպետորեն թափանցում էր իր աշակերտների հոգու խորքերը և երաժշտության օգնությամբ նրանց մեջ արթնացնում սեր ու նվիրվածություն հարազատ ժողովրդի ու նրա ազգային կուլտուրայի նկատմամբ: Թե Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և թե Պոլսում նա դաստիարակել է բազմաթիվ աշակերտներ, որոնք հետագայում դարձել են հայ մշակույթի մասնավորապես երախծտության անխունջ մշակներ: Նրա աշակերտներից հատկապես պետք է հիշատակել Ս. Պ. Մելիքյանին, Վ. Տեր-Առաքելյանին, Մ. Բաբայանին, Վ. Սարգսյանին, Ա. Շահմուրադյանին, Բ. Կանաչյանին և շատ ուրիշների, որոնք իրենց գործնեության ընթացքում մշտապես ղեկավարել են Կոմիտասյան պատգամներով և զգալի գործ են կատարել հայերենի մշակույթի զարգացման ու պրոպագանդայի ուղղությամբ: Կոմիտասի համերգ դասախոսությունները որոնց ընթացքում նա հանդես է եկել որպես դասախոս, մեներգիչ, խմբավար, դաշնամուրային ընկերակցող, շատ կարևոր դեր են կատարել հայկական երաժշտության բարձր արժանիքները վեր հանելու և ցուցադրելու գործում: Հենց այդ համերգ-դասախոսությունների ընթացքում է, որ հատուկ փայլով դրսևորել է Կոմիտասի բազմակողմանի տաղանդը և ունկնդիրների վրա թողել անջնջելի տպավորություն:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կոմիտասի հանճարն այսօր ճանաչելի է ամբողջ աշխարհում. նա իր ստեղծագործական, գիտահետազոտական վաստակով ու բարձր արվեստով ձեռք է բերել միջազգային ու համամարդկային ճանաչում, մեծահամբավ հռչակ: Մեծանուն երաժշտագետն իր ժողովրդի բազմադարյա հոգևոր-մշակութային ժառանգության խտացումն է, հայի հավաքական անկրկնելի կերպարը: Մեծանուն հայորդու մասին, կարելի է ասել, գրվել է հնարավոր ամեն ինչ, ամբողջությամբ ուսումնասիրվել է նրա թողած հոգևոր-մշակութային ժառանգությունը, բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել նրա՝ դրամատիկ և ողբերգական իրադարձություններով լեցուն կյանքին ու գործունեությանը: Կոմիտասի կերպարը եղել և մնում է ոչ միայն բազմաբնույթ ուսումնասիրությունների և վերլուծությունների օբյեկտ, այլև ոգեշնչման ու ընդօրինակման աղբյուր է ժամանակակից բազմահազար սերունդների համար:

Կոմիտասի գործերն ուսումնասիրողները վկայում են, որ ժողովրդական երգի նրա մշակումները մաքուր են և հավատարիմ բուն մեղեդուն: Կարևորելով ժողովրդական երգի տեղն ու դերը ազգային մշակույթի կերտման ու պահպանման հարցում, ինչպես նաև՝ իրավացիորեն ընդունելով, որ ժողովրդական երգը յուրաքանչյուր ազգի մշակութային պատկերն ու գծագիրն է, որով արտահայտվում է զգացմունքային-ռացիոնալ հոգեբանական վիճակը՝ Կոմիտասին կոչել են հայ երգարվեստի մեծ գիտնական և ուսուցիչ:

Սովորելով և ավարտելով Էջմիածնի ճեմարանը՝ Կոմիտասն անմիջապես դասախոսական աշխատանքի է անցել հայրենի կրթօջախում որպես երաժշտության դասատու: Նրա շնորհիվ՝ նոր մակարդակի է բարձրանում «Եկեղեցական երգեցողություն» առարկայի դասավանդումը, որոշակիորեն լուծվում են երաժշտության դասավանդմանն ու դասագրքերին առնչվող լուրջ խնդիրները:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում աշխատելու տարիներին (Ճեմարանում Կոմիտասի մանկավարժական գործունեությունը տևել է 13 տարի) Կոմիտասն իր առջև դրել էր խնդիր՝ հիմնովին բարելավել երաժշտություն առարկայի դասավանդման գործընթացը: Մանկավարժական գործունեության իր առաջին ծրագիրը Կոմիտասը

կազմել է 1895 թ. մայիսի 18-ին, որտեղ վարդապետը գրել է. «Վերջին երեք տարում եկեղեցական երաժշտության դասատվությունը Գևորգյան ճեմարանում թերի է մնացել»: Խիստ մտահոգված իր ապրած ժամանակում երաժշտության ուսուցման այդ խնդրով՝ Կոմիտասը մի զեկուցագիր-նամակ է գրել Նորին վեհափառության սրբազնագույն հայրապետին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Մատթէոս Բ-ին, որտեղ խիստ քննադատելով հայ հոգևոր երաժշտությունը աղավաղողներին՝ «թերուս ու տգետ, անփորձ ու անշնորհք դպիրներին ու դպրապետերին», մանրամասնորեն ներկայացրել է մանկավարժական իր նոր ծրագիրը, որի մասին առանձին արժեքավոր ուսումնասիրություն է կատարել հայ անվանի երաժշտագետ և բանահավաք Մաթևոս Մուրադյանը՝ հարցը քննելով «Ազգային երաժշտական ուժերի պատրաստման Կոմիտասյան ծրագիրը» խորագրով իր հոդվածում: Այստեղ հոդվածագիրը լուսաբանում է Կոմիտասի մանկավարժական գործունեությանն առնչվող հարցեր: Նա գրում է. «Հանճարեղ երաժշտի տարիներով փայփայած նվիրական երազանքը՝ հայկական երաժշտանոց հիմնելու գաղափարն իրականացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո միայն, երբ Երևանում հիմնադրվեց պետական կոնսերվատորիա, որն այժմ հպարտությամբ կրում է մեծ Կոմիտասի անունը»: Կոմիտաս վարդապետը երազում էր դպրոցներ ստեղծելու, ազգային երաժշտանոց հիմնելու մասին և այդ առնչությամբ ծրագրեր էր փայփայում՝ մշտապես մտահոգված լինելով «երաժշտական ուժերի» կերտման և դաստիարակման, երաժշտության ուսուցման, այդ գործընթացում առկա խնդիրների ու թերությունների հարցերով:

Վաղուց ի վեր երազելով երաժշտանոց ստեղծել հայ երիտասարդության համար՝ Կոմիտասը հույս էր տածում իրականացնել այն Պոլսում: Նրա ծրագրի համաձայն երաժշտանոցը պետք է ծառայեր հետևյալ նպատակներին.

1. Ուսումնասիրել հայկական և եվրոպական երաժշտությունը:
2. Ունենալ ձայնական ու գործիքային դասարաններ:
3. Կազմակերպել զեկուցումներ երաժշտական խնդիրների շուրջ:
4. Հիմք դնել երաժշտական հրատարակության:
5. Ունենալ մշտական երգչախումբ:

Սակայն երաժշտանոցի փոխարեն՝ շատ ջանք գործադրելուց հետո Կոմիտասին հաջողվեց ստեղծել 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, որի կազմակերպ-

մանն օժանդակեցին հայ երիտասարդությունը, արվեստասեր հայրենակիցները:

Կոմիտասի ստեղծագործությունների դասավանդման տարիների փորձը փաստում է դրանց դերը նոր սերնդի կրթության, երաժշտագեղագիտական դաստիարակության, հայեցի ոգու և ենթագիտակցության կերտման ենթագիտակցության մեջ: Նրա մանկավարժական հայացքները, ինչպես և նրա ստեղծագործությունները օժտված են սերունդներ կրթելու, հայեցին ու հայրենականը պահպանելու, մշակութային հոգևոր արժեքները վերաարժևորելու, հայ մեծանուն մտավորականների ավանդները նորովի գնահատելու ներուժով:

Կոմիտասի կերպարը որպես մանկավարժ դիտարկելու հարցում կարևոր է նրա «Պարը և մուկը» հոդվածը, որում հանգամանորեն ներկայացված են մեծանուն հայորդու մանկավարժական հայացքները: Մանրամասնությամբ ներկայացվում են նաև Կոմիտասի կազմած առարկայական ծրագրերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս նրա դասավանդման հայեցակարգի մասին:

Աշակերտներին օգնելու նպատակով կոմպոզիտորը գրել է մի շարք դասագրքեր՝ «Երաժշտության տարրական տեսություն», «Հայկական նոտագրություն», «Հարմոնիա»: Կոմիտաս վարդապետը մի շարք աշխատանքներում, մասնավորապես «Հայ գեղջուկ երաժշտություն» հոդվածում ձևակերպել է ժողովրդական արվեստի վերաբերյալ իր տեսակետները: Նա հոդվածը գրել է 1906 թ. և առաջին անգամ ոչ լրիվ տպագրել 1907 թ. Փարիզի «Անահիտ» հանդեսում: 1941 թ. հրատարակել է Երևանում՝ «Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ» ժողովածուի մեջ զետեղված է հատվածաբար, կրճատումներով: Միայն 2005 թ. Երևանում լույս տեսած նոր պրակում՝ Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Ա հոդվածը տպագրվել է ամբողջությամբ իր բնագրային տարբերակով, որը մեզ համար հիմք է ծառայում:

Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքները բխում են երգի ու պարի բնական միջավայրի ձևավորումից և դրսևորումից: Ըստ էության՝ կոմպոզիտորի հայացքները հանգում են երաժշտության ուսուցման միջավայրային և անհատակողմնորոշիչ ներկայիս կրթական պահանջներին՝ առանցքում դնելով ուսուցչին, դեպի երեխայի անձը նրա ունեցած վերաբերմունքը և այն միջավայրի ձևավորումը, որն առավելագույնը կնպաստի երաժշտության, երգի ուսուցման արդյունավետ իրականացմանը և թերությունների վերացմանը: Կոմիտասի ազգագրական պատկերացումները ազդե-

ցություն են թողել իր երգչախմբային ստեղծագործությունների վրա:

«Կոմիտասի գործը արդիական է միշտ և հատկապես այսօր, երբ ամենուր աղավաղվում է հայ երգը, զարդարվում արևելյան ելևէջներով: Այդ լաբիրինթոսում Կոմիտասը առաջնորդ է, որը նրան կուղղի դեպի հայ անաղարտ երգն ու երաժշտությունը: Ուսուցչի դասավանդման ձևից է կախված, թե ինչքանով թեման կհետաքրքրի երեխային»…աշակերտները կոգեշնչվեն Կոմիտասի ազգանվեր գործով, կդառնան նրա արժեքների կրողը:

Անհերքելի է Կոմիտասի՝ որպես մարդ-անհատի բարոյական կերպարով աշակերտների արժեհամակարգը ձևավորելու կարևորությունը, քանի որ նա մարդասիրության, հանդուրժողականության, հայրենասիրության, համեստության և ազնվության վառ օրինակ է: Վերջիններս մատաղ սերունդներին բարոյակրթելու լավագույն արժեքներից են:

Լինելով հայկական երաժշտարվեստի մշակը՝ հայ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի գործունեության կարևորագույն ոլորտներից մեկն է եղել մանկավարժությունը: Հայ անվանի գրող Դերենիկ Դեմիրճյանի բնորոշմամբ՝ «Նա հանգիստ էր, ընկերական, մեղմ, ոգևորությամբ տոգորված: Նրա ժպտուն աչքերում թաքնված թախծալի ցոլքը, պարզ ինտոնացիան, խանդաղատալի ձայնը մատնում էին նրա ներքին կրակը: Կոմիտասը հիվանդ էր ժողովրդական երգով: Դասավանդելիս երգում էր և նրա ժողովրդական երգի մեջ զգացվում էին նրբերանգներ, ռիթմ, կոլորիտ»:

Հայ հանճարեղ կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երաժշտագետ, երգիչ,խմբավար և մանկավարժ՝ ահա այս բնորոշումներն են ուրվագծում հայ մշակութային գործչի՝ Կոմիտասի դիմագիծը: Պատահական չէ, որ այս բնորոշումներիկողքին ուրույն տեղ ունի նաև Վարդապետ «կոչումը»: Կոմիտասը մեծ ավանդ է ունեցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսուցանելու տարիներին, որտեղ կոմպոզիտորը պաշտոնավարել է որպես երաժշտության ուսուցիչ, նրա ժամանակի երաժշտագետների վկայությամբ, Կոմիտասի վարդապետության շրջանում ճեմարանում դասավանդվող երաժշտա-տեսական առարկաների դասարանն ավելի բազմամարդ էր, քան շատ կոնսերվատորիաներում և երաժշտական ուսումնարաններում:

Կոմիտասի մանկավարժական հմտության վառ ապացույցն են երգիչներին ուղղված նրա տասը պատվիրանները: Կոմպոզիտորը պատասխանատվության մեծ զգա-

ցումով էր վերաբերվում մանկավարժությանը՝ ասելով. «Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը։ Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է։ Սխալուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը»։ Մեծ երաժշտագետը շեշտադրել է մանկավարժի ազգանվեր գործի կարևորությունը սերունդների ազգային դաստիարակության գործում:

Իր ակտիվ և բեղուն մանկավարժական գործունեության ընթացքում մեծատաղանդ արվեստագետը կրթել է վառ երաժիշտների մի ամբողջ սերունդ, որոնք դարձան իրենց ուսուցչի անմահ գործի շարունակողներն ու ժառանգության պրոպագանդողները։

Անուրանալի է Կոմիտասի մանկավարժական վաստակը և նրա պատգամները եկող սերունդներին կրթող մանկավարժներին։ Նա երեխաների ուսուցման և դաստիարակության հարցում մեծապես կարևորում է ուսուցչի դերը՝ նրան վերապահելով մանկան հոգին և ներաշխարհը հասկանալու, խորամուղ լինելու, այն ճիշտ մոտեցմամբ բացահայտելու և հանճարներ կերտելու բարդ ու կարևոր գործը։Այս առնչությամբ նա ասել է. «Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին, պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրանալ։ Սխալ դաստիարակության արդյունքն է, որ շատերը, որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր ...»։ Կոմիտասի պատգամների իրականացումը արդի կրթության, դաստիարակության և մանկավարժական հիմնարար խնդիրների լուծման լավագույն ուղիները կարող են դառնալ, եթե դրանք վերագնահատվեն, իրականացվեն արդի մեթոդական հենքով և նպատակաուղղվեն հանրակրթության արդի պահանջների իրականացման արդյունավետության բարձր մակարդակի ապահովմանը։ Նրա մանկավարժական հայացքները արդի կրթության խնդիրների, նպատակների, վերջնարդյունքների իրականացման ճանապարհին կարող են դառնալ յուրաքանչյուր ուսուցչի բանալին, քանի որ վերջինիս իրականացնողը հենց ուսուցիչն է, ում գործը կարևորում էր հենց ինքը Կոմիտասը։

Կոմիտասի մանկավարժական հայացքներն արդիական են այնքանով, որքանով նրա կերտած երաժշտությունը, իսկ վերջինս անձի դաստիարակության լավագույն ձևերից մեկն է, ներդաշնակ զագացման կարևոր նախապայմաններից:

ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՊԱՐԸ ԵՎ ՄՈՒԿԸ» ՀՈԴՎԱԾՈՒՄ

Կոմիտասի կերպարը որպես մանկավարժ դիտարկելու հարցում կարևոր է նրա «Պարը և մուկը» հոդվածը, որում հանգամանորեն ներկայացված են մեծանուն հայորդու մանկավարժական հայացքները: Մանրամասնությամբ ներկայացվում են նաև Կոմիտասի կազմած առարկայական ծրագրերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս նրա դասավանդման հայեցակարգի մասին: Վարդապետը մանկավարժի հայեցողությամբ հիմնավորում և վերհանում է երգի, խոսքի, պարի փոխկապակցված ուսուցման կարևորությունը մատաղ սերունդների ազգային դաստիարակության, մտավոր, ֆիզիկական զարգացման, քաղաքակրթության, ապագա դպրոցի գեղարվեստական զարգացման ներուժի ավելացման հարցում: Պետք է իրապես արժևորել մեծ կոմպոզիտորի մանկավարժական այս դիտարկումները, քանի որ յուրաքանչյուր անհատի, ազգի զարգացման ու ճիշտ դաստիարակության հիմքերն ու արմատները սկիզբ են առնում հենց դպրոցից, դպրոցն է այն կարևոր օղակներից մեկը, որտեղ սաղմնավորվում ու զարգանում են անձի համոզմունքները, պատկերացումները ազգայինի, քաղաքակրթության, մշակույթի մասին, ինչպես նաև՝ վերաբերմունքը դեպի ազգայինը, մարդկային արժեքները:

Կոմիտասը հոդվածում իբրև առանցք գծվում է ազգայինի, մասնավորապես՝ ազգային դաստիարակության խնդիրըմ, իսկ դրա լուծման հարցում նա նշանակալի է համարում մանկական երգեցողությունը: Ըստ էության, դեռ մանկուց կարևորվում է ազգային երգի ու երաժշտության ուսուցումը: Վարդապետը այս հարցում կարևորում է երգի զգայական ներուժը՝ այն զուգորդելով պարի հետ: Նա գրում է. «Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողության ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»:

Կոմիտասը քննում է նաև մատաղ սերնդի ազգային դաստիարակության հարցում պարի և երգեցողության հիմնարար նշանակությունը՝ շեշտադրելով դրանց դերը ապագա դպրոցական կյանքի գեղարվեստական զարգացման մեջ: Նա հիմնավորում է պարի զարգացնող և դաստիարակչական ներուժը, մատնանշելով դրա նշանակությունը մտավոր և ֆիզիկական զարգացման մեջ՝ «Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ» ձևա-

կերպմամբ: Երգեցողությունն ու պարը նա համարում է նաև մարդու մեջ պայաքարող ոգի ձևավորելու միջոց: Նա նշում է. «Խոսքը, երգեցողությունը և պարը կառույգացնեն, կը մարզեն մարմինը: Բոլոր գեղարվեստները շարժումին մեջ կարտահայտվին: Ուրեմն մանկական երգեցողությունն ինչքան կարևորություն ունի ապագա քաղաքակրթության մեջ»:

Հետաքրքրական է նաև Կոմիտասի մշտապես արդիական հարցադրումը՝ ո՞րն է կրթության, դպրոցի նպատակը: Իսկապես, ցանկացած ժամանակաշրջանում կրթության, դպրոցի նպատակի սահմանումն ու դրան հասնելու ուղիների նախանշումը եղել է կարևոր և արդիական, որին իր ժամանակներում փորձել է պատասխանել նաև Կոմիտասը: Նա կրթության և դպրոցի նպատակի սահմանման հարցում ևս առաջադրում է մանուկների դաստիարակության կարևորագույն ու պատասխանատու խնդիրը. «Մանուկը բարոյական կյանքի փիլիսոփայությունը, կյանքի հասկացողությունը չունի: Պետք է անոր հոգեկան զգացումներուն հավասարակշիռ դաստիարակություն մը տալ»: Նա, որպես գերխնդիր, նշում է երեխաների պահանջմունքներին համապատասխան, դրանց հարմարեցված դասագրքերի պակասը: Կոմիտասը մերժում է երեխաներին անհասկանալի բարոյախոսական, խրատական, փիլիսոփայական բովանդակությամբ երգերի ուսուցումը: Նա կարևորում է մանկական ճիշտ, երեխաներին հոգեհարազատ ու հասկանալի նյութերի ուսուցումը: Ըստ էության, մատաղ սերդնի դաստիարակության հարցում մեծ տեղ է հատկացվում նրանց հոգեկան ու ֆիզիկական ճիշտ զարգացմանը նպաստող ուսուցման գործընթացին, որը հնարավոր է ապահովել կրթության տվյալ աստիճանի բովանդակության և դաստիարակության խնդիրների համաձայնեցված համակարգ ունենալու դեպքում: Անհատի ճիշտ դաստիարակության խնդիրը քննելով՝ Կոմիտասը առաջադրում է համազգային խնդիր և քննարկվող դասախոսությունհոդվածը եզրափակում հետևյալ արժեքավոր համազգային կոչ-պատգամով. «Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք վերջը»:

Առանձնակի կարևորվում է ազգային ինքնության պահպանումն ու վերահաստատումը: Այս տեսանկյունից ամենազորեղ գործոններից է համարվում ազգային արվեստը, որում ուրույն տեղ ունեն նաև ազգային երգն ու պարը: Ուստի՝ վարդապետի պա-

գամները պետք է լինեն հիմնայուն ազգային երաժշտարվեստն ու պարը վերագնահատվելու և ազգային երգ ու պարի կրթա-դաստիարակչական նշանակությունը կարևորվելու համար: Պատահական չէ, որ վերջին ժամանակներում ուսումնական հաստատությունների կրթական գործընթացում բավականին մեծ տեղ հատկացվեց «ժողովրդական պարին»: Զարգացած, ազգային ինքնագիտակցությամբ ուժեղ, քաղաքակիրթ, ստեղծագործ անհատականություն դաստիարակելու արդյունավետ միջոց է նաև ազգային երգը:

Կրթության, դաստիարակության Կոմիտասյան հարցադրումների մեջ որոշիչ դեր ունի նաև ազգային երգ ու պարի այս կամ այն տեսակի նշանակությունը, մասնավորապես՝ հայրենասիրական, ավանդույթների և սովորույթների, ծեսերի վերաբերյալ երգերն ու պարերը հնարավորություն են ընձեռում բարոյական, հայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծման, նաև հոգևոր մշակութային արժեքներին հաղորդակից լինելու, ազգային արժեքները արժևորելու համար:

Այսպիսով, անուրանալի է Կոմիտաս վարդապետի երաժշտամանկավարժական հայացքների դերը երգի, երաժշտության ու պարի ուսուցման միջոցով մատաղ սերունդների բարոյակրթության, քաղաքակրթության, ճիշտ դաստիարակության, ազգայինին և արժեքային համակարգին հաղորդակից դարձնելու և կրթական այլ խնդիրներ լուծելու, դպրոցի հետագա զարգացման նոր հարցադրումներ ձևակերպելու և դրանց լուծման մեջ երգի ու երաժշտության ուսուցման դերը նորովի վերագնահատելու և արժևորելու գործում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի թեման՝ Երգ. ԿոմիտասԴասարան՝ 2-րդ

Երգեցողություն՝ Կոմիտասի Կաքավի երգը և Ամադեոս Մոցարտի Օրորոցային երգը

Նոտագրություն՝ հատված Կաքավի երգիցԴասի նպատակը՝

Ուսուցանվող և ունկնդրվող երգերի միջոցով ծանոթացնել Կոմիտասի երաժշտարվեստին՝ դաստիարակելով սեր դեպի ժողովրդական երգն ու երաժշությունը:
Խնդիրները՝

- Զարգացնել ունկնդրվող երգը մեկնաբանելու և բնութագրելու կարողություն:
- Զարգացնել երգը ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու հմտություն:
- Արժևորել ազգային երգը, ժողովրդական օրորոցային երգերը և գնահատել արվեստի անվանի գործիչների կյանքն ու ստեղծագործությունները:

Դասի ընթացքը

Երաժշտության 2-րդ դասարանի դասընթացում նախատեսվում է հայ մեծագույն արվեստագետ, կոմպոզիտոր Կոմիտասի երգարվեստի վերաբերյալ ուսումնական նյութը: Աշակերտներին երգի ունկնդրման և երգեցողության նախատրամադրելու և դասանյութի բովանդակության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով ուսուցիչը հանդես է գալիս ներածական խոսքով և նշում, թե որքան կարևոր է ճանաչել մեծանուն մարդկանց, նրանց կյանքին ու գործին հաղորդակից դառնալով՝ օգտակար օրինակ վերցնել: Երեխաները հասկանում են, որ իրենց կյանքում տեղ կարող են գտնել հանճարների շատ արարքներ ու գործեր, որ նրանց ապրածն ու կենսափորձը կարող են ուղենիշ դառնալ ողջ կյանքի ընթացքում: Աշակերտների հետաքրքրության խթանմանը հաջորդում է մտագրոհի միջոցով օրորոցային երգի ու Կոմիտասի վերաբերյալ երեխաների նախնական գիտելիքների վերհանումը: Որպես դիդակտիկ նյութ՝ ցուցադրվում է Կոմիտասի դիմանկար և հակիրճ ներկայացվում նրա կյանքն ու գործը: Ուսուցչի մեկնաբանությամբ՝ ընթերցվում է Կոմիտասի մասին դասանյութը: Ուսուցանվում է Կոմիտասի ազգանվեր գործը՝ հայ ազգային երաժշտության զարգացման գործում, այդ թվում՝ մանկական ժողովրդական երգերի մշակման հարցում, որոնց շարքում մատնանշվումեն ժողովրդական օրորոցային երգերը:

Այնուհետև զուգահեռներ են անցկացվում Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի միջև, ուսուցիչը հիշատակում է հայ մեծանուն բանաստեղծի Կաքավիկ գեղեցիկ բանաստեղծությունը և նշում, որ վերջինիս խոսքերով հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասը երգ է ստեղծել: Կաքավիկը ուրախ և քնքուշ ելևէջներով հարուստ երգ է: Այն երաժշտական պարզ հնչյուններով պատկերում է ծաղիկների, ցողի ու շաղի մեջ կաքավիկի թռվռուն կյանքը: Երեխաները ունկնդրում են երգը և համոզվում, եր երգի մեղեդին համապատասխանում է բանաստեղծության բովանդակությանը.

Արև բացվեց թուխ ամպերեն, Կաքավ թռավ կանաչ սարեն. Կանաչ սարեն, սարի ծերեն, Բարև բերավ ծաղիկներեն:

Ապա ուսուցանվում է Նանիկ ասեմ բալիկիս երգը, երեխաները ծանոթանում են երգի բովանդակությանը, և առաջարկվում է, որ երեխաներն իրենց կյանքից հիշեն ինչ-որ հատված՝ կապված ստեղծագործության բովանդակությանը:

Նոտագրում

Նոտատերում գրել հատված ուսուցանվող երգից և կարդալ նոտաները:



Ունկնդրում

Ունկնդրել Կաքավի երգը և Օրորոցային երգը: Ուշադրություն դարձնել երգերի բնույթին, թե ինչպես են օրորոցային երգերը կատարվում շատ քնքուշ և մեղմ ձայնով: Օրորոցային երգերի մեղեդիները նուրբ են, նազելի և հանգստացնող: Մոցարտի Օրորոցային երգը իր բնույթով տարբերվում է սովորական օրորոցային երգերից: Համեմատվում են Հովհաննես Թումանյանի Կաքավիկ բանաստեղծության բառերով ստեղծված երգն ու Կաքավի երգը:

Դասի ամփոփում

Կատարելով ուսուցանվող երգը՝ դասի նպատակն իրականացվեց, քանի որ երգի և այն ունկնդրելու միջոցով ընդլայնվեցին երեխաների պատկերացումները ժողովրդական

օրորոցային երգերի մասին, երեխաների մեջ արմատավորվեց սեր դեպի ժողովրդական, ազային երգն ու երաժշտությունը, ձևավորվեց ազգայինն արժևորելու, պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու կարևորության նրանց գիտակցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքները՝ ուղղված մատաղ սերունդների կրթության, դպրոցական ուսուցման, դաստիարակության սխալների, թերությունների, ազգային մտածելակերպի ու ազգային դաստիարակության խնդիրներին, կենսունակ են և հրատապ բոլոր ժամանակներում:
2. Կոմիտասն իր երաժշտամանկավարժական հայացքներում հավատարիմ է մնում երգի, երգեցողության ու պարի փոխկապակցման միջոցով մանուկներին բարոյակրթելու, անհատի մեջ ազգայինը սերմանելու, նրա մտավոր ու ֆիզիկական ճիշտ զարգացման հարցադրումներին, որոնց պատասխաններն էլփորձում է գտնել:
3. Արդիական են հատկապես հարցադրումները և դիտարկումները՝ կապված կրթության ու դպրոցի նպատակի սահմանման հետ:
4. Պետք է իրապես արժևորել մեծ կոմպոզիտորի մանկավարժական հարցադրումները, որոնք այսօր էլ հստակ պատասխան են փնտրում և որոնց լուծման ճանապարհին Կոմիտասի դիտարկումները կարող են լինել ուղենիշ, դառնալ կրթության ու դպրոցի զարգացման արդյունավետ ուղիների մշակման բանալին:
5. Երգի և երաժշտության կարևորության գիտակցական հիմքերը պետք է դրվեն դեռևս դպրոցում՝ սկսած տարրական դասարաններից, որի համար կարևոր է այնպիսի երգերի ու երաժշտության ընտրությունը, որոնք առավելագույնն են նպաստում կրթության և դպրոցի նպատակի իրականացմանը: Իբրև այդպիսիք՝ Կոմիտաս վարդապետը մեզ է ավանդել ժողովրդական, ազգային երգն ու երաժշտությունը, պարը: Միայն այս հենքով հնարավոր կլինի մատաղ սերնդի հայեցի, ազգանվեր, հայկական ու ժողովրդական երաժշտարվեստի հանդեպ սիրո սերմանման, ազգային դաստիարակության, բարոյական ուազգային արժեքային համակարգի ձևավորման արդյունավետ իրականացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարսեղյան Պ., Նորից մեծն Կոմիտասի մասին, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, 2021, (1), էջ 125-133:
2. «Եթե ապրենք Կոմիտասի պատգամներով, դա կլինի նրա երկրոդ գալուստը», Կոմիտաս 150,https://aspu.am/hy/content/ete_aprenq_komitasi_patgamnerov_da_klini_nra_erkr od_galusty/#sthash.pcIEETso.dpuf
3. Կոմիտաս, Պարն ու մանուկը, Կոմիտասի դասախոսությունը Պոլսի Յեսայան դպրոցում, 1912,https://marinemkrtchyan.wordpress.com /2015/10/05/2238/
4. Հայ մշակույթ, Կոմիտաս,https://sites.google.com/site/haymsakuyt/erazstutyun/komitas
5. Հարությունյան Գ., Կոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ, Բանբեր Հայաստանի արխիվների, № 2(14), 1996:
6. Հովհաննիսյան Վ., Կոմիտաս վարդապետ, Մանկավարժական աշխատանքի վարպետները, https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5% A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF/%D5%A2%D5%A1% D5%A6%D%B/page9
7. Մուրադյան Մ., Ազգային երաժշտական ուժերի պատրաստման Կոմիտասյան ծրագիրը, Կոմիտասական, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, էջ 230-239:
8. Ռաբորի Հ.Ա., Ժողովրդական երգերի խմբերգային մշակումները XX դարի երաժշտության մեջ, Ատեն. սեղմագիր, Երևան, 2012:
9. Батишева В.Н. Фортепианное творчество Комитаса. Национальное культурное наследие России: региональный аспект. Материалы VIII Всероссийской научно-практической конференции. Под редакцией Л.М. Артамоновой, В.И. Ионесова, М.В. Курмаева. Издательство: Самарский государственный институт культуры. Самара. 2020, с. 9-13.